



Գրեթե 20 տարի առաջ՝ 1995-ին, ավելի քան 17 հազար պաշտոնական պատվիրակներ և հասարակական կազմակերպությունների 30 հազար ակտիվիստներ ողջ աշխարհից, այդ թվում Չայաստանից, հավաքվեցին Պեկինում՝ Կանանց հարցերով ՄԱԿ-ի 4-րդ համաշխարհային զագաթնաժողովում: Չայաստանից 26 կին էր մասնակցում զագաթնաժողովին՝ պաշտոնական պատվիրակության 8 անդամներ և ոչ կառավարական կազմակերպությունների 18 ներկայացուցիչներ: Ի դեպ, երջանակափոխառակ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն այն եզակի հոգևորականներից էր, որ այդ օրերին ուղեւոր էր հղել զագաթնաժողովի մասնակիցներին՝ մշտելով, որ անարդարությունները պետք է շտկվեն, և կանայք հավասար են տղամարդկանց Աստուծո և Արարչի առջև:

Գագաթնաժողովին 189 պետությունների պատվիրակները պարտավորություններ ստանձնեցին, ըստ որոնց կանայք և աղջիկները պետք է ունենան տղամարդկանց հետ հավասար իրավունքներ և հնարավորություններ կյանքի բոլոր բնագավառներում: Այս մտնեցումն ամրագրվեց զագաթնաժողովում ընդունված Պեկինի հռչակագրում և Գործողությունների ծրագրում, որոնք ողջ աշխարհի համար «ճանապարհային քարտեզ» դարձան գեներային հավասարության ապահովման գործում:

Այս տարվա մայիսին «ՄԱԿ-Կանայք» կառույցն ազդարարեց Պեկին+20 գործընթացի սկիզբը, որի շրջանակում կամփոփվեն Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի ձեռքբերումներն ու խնդիրները, ինչպես նաև կնխատևաշնչվեն հետագա անելիքները: Քարոզարշավի կարգախոսն է՝ «Կանանց հնարավորությունների ընդլայնումը ողջ մարդկության հնարավորությունների ընդլայնումն է: Հիշեք այդ մասին»:

**«Գեներային անհավասարության վերացման վերջնաժամկետը՝ 2030 թվականն է»**




Այս հայտարարությամբ հանդես եկավ «ՄԱԿ-Կանայք» կառույցի գործադիր տնօրեն Ֆունգիե Մլամբո-Նգվուկան Նյու Յորքի Ապոլլո» թատրոնի շենքում հունիսի 26-ին կայացած Պեկին+20 գլոբալ գործընթացի հանդիսավոր մեկնարկի ժամանակ:

«Աշխարհում ոչ մի երկիր դեռևս չի հասել բացարձակ և լիարժեք գեներային հավասարության: Ես հավանում եմ, որ դա հավանաբար կհասնի, բայց այն անհրաժեշտ է: Սա մեր ժամանակի առաքելությունն է: Գեներային անհավասարության վերացման նպատակով վերջնաժամկետը հայտնի է՝ 2030 թվական: Եվ այսօր, Պեկին+20 այս քարոզարշավի մեկնարկով մենք տալիս ենք գեներային անհավասարության վերացման մեկնարկը»,- հայտարարեց «ՄԱԿ-Կանայք» կառույցի ղեկավարը:

# Միևեկ և քարոզարշավային ներդրումներ

Երկու առաջարկ սեռի հատկանիշով պտղի նախաձեռնյան ընտրության դեմ պայքարելու համար



## Ներդրումներ հանուն երիտասարդության Այս կարգախոսի ներքո է մշակվում այս տարի Բնակչության համաշխարհային օրը

Չայաստանում 18-30 տարեկան երիտասարդները կազմում են ընդհանուր բնակչության շուրջ 27 տոկոսը: Գրեթե երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության դրույթների համաձայն՝ երիտասարդները հասարակության կարևոր ներուժն են, և նրանց պետք է ազատ, բազմակողմանի զարգացած, առողջ և պատասխանատու քաղաքացիներ դառնալու հնարավորություն ընձեռել:

Չայաստանի ծրագրի առաջնահերթություններից մեկը երիտասարդների զբաղվածության ապահովումն է, գործազրկությունը թիվ մեկ խնդիրն է երիտասարդության շրջանում, ի դեպ, ոչ միայն Չայաստանում, այլ նաև ողջ աշխարհում: 2013-ին հրատարակված ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Երիտասարդների զբաղվածությունը Չայաստանում» զեկույցի տվյալներով՝ մեզանում երիտասարդների գործազրկության մակարդակը ավելի քան 40 տոկոս է, ինչը մոտ 2,5 անգամ բարձր է միջին մակարդակից: Ընդ որում, կանանց շրջանում այն ավելի բարձր է, քան տղամարդկանցի: Ի դեպ, զեկույցը մշակվել է Հագարա մյակի զարգացման նպատակների արագացման գործընթացի շրջանակներում:



Լուսակարը՝ Լիլիան Գալստյանի

Այս աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «Ձբաղվածության գլոբալ միտումները -2013» զեկույցի համաձայն՝ ԱՊՀ-ում մինչև 2017 թվականը երիտասարդ տղամարդկանց գործազրկության մակարդակը կկազմի 17,3%, իսկ երիտասարդ կանանցը՝ 17,7%: Ըստ զեկույցի՝ երիտասարդների գործազրկության ամենաբարձր մակարդակը Չայաստանում է՝ 39,1%:

Յուրաքանչյուր տարի ԳԳ աշխատաշուկա են մտնում շուրջ 21 հազար բարձրագույն կրթություն և 10 հազար միջին կրթության ունեցող երիտասարդներ: Սակայն ըստ «Չայաստանի երիտասարդության ազգային զեկույցի» մեր աշխատաշուկայի և մասնագիտական կրթության համակարգի միջև առկա է շատ մեծ անհամապատասխանություն: Մասնավորապես, իրենց մասնագիտությամբ չեն աշխատում բարձրագույն կրթությամբ երիտասարդների 42,7%-ը և միջին մասնագիտական կրթությամբ երիտասարդների 66,0%-ը:

Բացի աշխատատեղերի բացակայությունից և գործազրկությունից, երիտասարդները կանգնում են բազում այլ խնդիրների առջև, որոնց թվում կրթության անհասանելիությունն է, բնակարանի բացակայությունը, առողջապահական ծառայությունների, այդ թվում՝ վերարտադրողական առողջության հետ կապված ծառայությունների մատչելիությունը... Այս ամենի հետևանքով՝ երիտասարդների շրջանում բարձր են միգրացիոն տրամադրվածությունները:

Երիտասարդները շատ ավելի ծանր են տանում սոցիալական անարդարության դրսևորումները: Փորձագետների գնահատականներով պետության աջակցությունը երիտասարդների հիմնախնդիրներին բավարար չէ, թեպետ մի շարք նպատակային ծրագրեր են մշակվում և իրականացվում, բայց ոչ այնքան արդյունավետ:

Այսպես, ԳԳ-ում արդեն մի քանի տարի գործում է «Երիտասարդ ընտանիքի մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը: Հիշեցնենք՝ ծրագրից կարող են օգտվել այն երիտասարդ ընտանիքները, որոնցում ամուսինների զուգարային տարիքը չի գերազանցում 60-ը, ինչպես նաև երեխա ունեցող 18-30 տարեկան միայնակ ծնողները: Եվ դա այն դեպքում, որ ընտանիք կազմող երիտասարդների տարիքային շեմն ակնհայտ ավելացել է, և այսօր ավելի հաճախ ամուսնանում են 25-30 տարեկան մեծ զուգար: Ամենահամեստ հաշվարկներով՝ վարկի մարման ամսական տոկոսադրույքը կազմում է 100-130 հազար դրամ: Նշանակում է՝ երիտասարդները պետք է առնվազն 300-400 հազար դրամ եկամուտ ստանան, որպեսզի կարողանան և՛ հազմվել, և՛ սնվել, և՛ կոմունալ վարձավճարներ մուծել, և՛ վարկ վճարել: Մինչդեռ Չայաստանում միջին ամսական աշխատավարձը մոտ 160 հազար դրամ է: Այս պարագայում առավել քան հասկանալի էր երիտասարդների դժգոհությունը՝ հավելյալ

պարտադիր կուտակային կենսաթոշակային պահումների ներդրումից: Բնակարանային վարկերը տրամադրվում են ամսվա 10 տարի մարման ժամկետով: Ձեռք բերվող բնակարանի արժեքի առավելագույն չափը 16 մլն դրամ է, պետությունը վերաֆինանսավորում է տարեկան 300 վարկ:

Նշենք նաև, որ մինչ այժմ վերաֆինանսավորվել է 1520 վարկ, թեպետ ենթադրվում էր, որ այս ծրագրի պոտենցիալ շահառուներ կհանդիսանան 6000 երիտասարդ զույգեր:

Սոցիալ-տնտեսական հանգամանքներով է պայմանավորված նաև երիտասարդների ընտանիք կազմելու դիքորոշումը: Այս հարցում երիտասարդների շատերը սկսում են առաջնորդվել ժամանակակից աշխարհում ընդունված հաջողակ կյանքի մոդելով, ըստ որի մարդ պետք է ուսում ստանա, կարիերա ստեղծի, որոշակի հաջողությունների հասնի, այնուհետև միայն մտածի ընտանիք կազմելու մասին:

Ըստ «Չայաստանի երիտասարդության ազգային զեկույցի»՝ հայ երիտասարդների շրջանում ամուսնացած չեն 27-29 տարեկանների ավելի քան մեկ երրորդը, իսկ 30 տարեկաններից՝ յուրաքանչյուր 4-րդը:

25-30 տարեկանների խմբում առաջիկա 2 տարիներին չեն պատրաստվում ամուսնանալու աղջիկների 39%-ը և տղաների 27%-ը: Չամուսնանալու տնտեսական պատճառներն առավել բնորոշ են տղամարդկանց, իսկ մշակութային պատճառները՝ կանանց: Աղջիկների 25%-ը չամուսնանալու պատճառ է նշում

սովորելը, 23%-ը՝ տարիքը, կարծում է, որ վաղ է, և 20%-ը՝ նշում է, որ ընտրյալ չունի: Տղաների դեպքում՝ 18%-ը նշում է, որ վաղ է, 16%-ը՝ լավ աշխատանք և 14%-ը՝ փող չունի:

Եվս մեկ՝ անմիջականորեն երիտասարդ ընտանիքներին վերաբերող հանգամանք: ԳԳ վիճակագրական ծառայության տվյալներով՝ մեր հանրապետությունում նախադրյալական տարիքի երեխաների միայն 21,6%-ն է մանկապարտեզ հաճախում, իսկ գյուղական համայնքներում՝ ընդամենը 10,5%-ը: Այս պաշտոնական թվերը ընդամենը փաստում են, թե որքան դժվար է երիտասարդ մայրերին համատեղել աշխատանքն ու ընտանիքը: Ընդ որում, այսօրվա սոցիալ-տնտեսական պայմաններում կնոջ չաշխատելու տարբերակը չի էլ դիտարկվում, այլապես երիտասարդ ամուսինները չեն կարողանա ոչ ընտանիքի գոյատևման հարցը լուծել, ոչ էլ մեկից ավելի երեխա ունենալ...

Ի՞նչ չափով են հայ երիտասարդները պատրաստ փոխել կյանքը: Ըստ զեկույցի՝ հայ երիտասարդների 53,1%-ը հետաքրքրված է երկրի ներքաղաքական կյանքով, սակայն հարցված երիտասարդների միայն 11,6%-ն է եղել որևէ կուսակցության կամ դրա երիտասարդական բաժնի անդամ: Երիտասարդների 76,2%-ը համարում է, որ Չայաստանում չկա այնպիսի կուսակցություն, որն արտահայտի իրենց շահերը: ԳԳ-ում գործում են 600 երիտասարդական հասարակական կազմակերպություններ, որոնցից, սակայն, 60-70-ն են ակտիվ:

## «Կանանց հիմնախնդիրները չեն ծերանում». քարոզարշավի մեկնարկ

«Կինը և քաղաքականությունը» և WomenNet.am կայքը սկսում են «Կանանց հիմնախնդիրները չեն ծերանում» տեղեկատվական քարոզարշավը:

Քարոզարշավի նպատակն է լուսաբանել Պեկին+20-ի և Հագարա մյակի զարգացման նպատակների հետ կապված միջազգային գործընթացները, որոնց մաս է կազմում նաև Չայաստանը:

Քարոզարշավը տևելու է մինչև 2015-ի մարտը, երբ Կանանց կարգափոխական ծրագրի 59-րդ նստաշրջանը կամփոփի Պեկին+20-ի արդյունքները և կնախանջի հետագա անելիքները:

«Կանանց հիմնախնդիրները չեն ծերանում» մեր քարոզարշավի ընթացքում ներկայացնելու ենք Պեկին+20 գործընթացները պարզաբանող բոլոր այն հիմնախնդիրները, որոնք ներառված են Պե-

կինի գործողությունների ծրագրի 12 խնդրահարույց բնագավառներում:

Դրանք են՝ Աղբատությունը, Կրթությունը, Առողջապահությունը, Բռնությունը, Ձիմված հակամարտությունները, Տնտեսությունը, Որոշումների ընդունումը, Կանանց դրության ինստիտուցիոնալ մեխանիզմները, Մարդու իրավունքները, ՁԼՄ-ները, Շրջակա միջավայրը, Աղջիկները:









ՄԵՆԵՆ . ՀԻ

Ի՞նչ է առաջարկում ՀՀ կառավարությունը

Այս պահին պտղի նախածննդյան ընտրության դեմ պայքարելու երկու եղանակ է առաջարկվում: Գարնանը 33 առողջապահության նախարարությունը ներկայացրեց մի օրինագիծ, որով առաջարկվում էր մինչև պտղի 30 շաբաթական դառնալը արգելել ծնողներին ապագա երեխայի սեռը հայտնելը: Այս առաջարկը տարակարծությունների ալիք բարձրացրեց, շատերը համարում էին, որ օրենքի ընդունման դեպքում կավելանան կոռուպցիոն ռիսկերը, իսկ արթուրները կանցնեն ընդհատակ: Ոմանք համարում էին, որ խախտվում է տեղեկատվության իրավունքը, թեպետ օրինագծի հեղինակները բացատրում էին, որ երեխայի կյանքի իրավունքն ավելի հիմնարար է, քան տեղեկատվության (տվյալ դեպքում սեռն իմանալու) իրավունքը:



Երկրորդ առաջարկը, որը վերջերս սկսեց քննարկվել առողջապահության նախարարությունում, իջեցնել հղիության արհեստական ընդհատման թույլատրելի շեմը մինչև 10 շաբաթ, քանի որ ուլտրաձայնային հետազոտությանը հղիության այդ ժամկետում երեխայի սեռը հնարավոր չէ որոշել: Այս համատեքստում ենթադրվում է ավելի մեծ ժամկետում հղիության արհեստական ընդհատումների հսկողության խստացում, ինչպես նաև վիժում առաջացնող դեղահաբերի վաճառքի կանոնակարգում: Այսինքն՝ այս դեպքում էլ որոշակի կոռուպցիոն ռիսկեր կան:

Ըստ ելույթի, երկու առաջարկով էլ չի սահմանափակվում կնոջ իրավունքը՝ ծննդաբերելու, թե՛ ոչ, սակայն նա չպետք է որոշի՝ աղջիկ ունենա, թե՛ տղա: Առավել ևս դա իրավունքը չունեն նրա կամ ամուսնու հարազատները, ինչպես դա հաճախ պատահում է: «Սեռով պայմանավորված հղիության ընդհատումն ավելի շատ սոցիալական խնդիր է, քան առողջապահական, պտղի սեռը չհայտնելու մասին օրենքի նախագիծը նախևառաջ ուղերձ է հասարակությանը և սատար է կանգնելու այն կանանց, ովքեր ստիպված են հղիության արհեստական ընդհատման դիմել՝ ընտանիքի անդամների ճնշմամբ»,- կարծում է Հայաստանում ՄԱԲ-ի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանը, նշելով նաև, որ այս հարցում

ցանկացած օրենսդրական մոտեցումը պետք է մինչև կյանքի կոչվելը մանրամասնորեն ծանրութեթև արվի, լրջորեն ուսումնասիրվի, որպեսզի արգելքները կամ սահմանափակումները ոչ թե բերեն կոռուպցիոն ռիսկերի ավելացմանը, այլ հնարավոր դարձնեն իրավիճակը կառավարելու և ցանկալի արդյունք ստանալու: Նա նաև ուշադրություն հրավիրեց այն հանգամանքին, որ մեր երկրում անզամ արթուրների վիճակագրությունը հնարավոր չէ հստակեցնել, քանի որ դեղատնտեսական հեշտությանը կարելի է ձեռք բերել հայտնի դեղամիջոց, որը տնային պայմաններում վիժման համար են օգտագործում:

Գարնանը 33 առողջապահության նախարարության մշակած օրինագիծը, որով պետք է արգելվի ծնողներին հայտնել ապագա երեխայի սեռը (մինչև 30 շաբաթական դառնալը), տարակարծություն է առաջացրել հասարակությունում: Նույնիսկ գենդերային անհավասարության դեմ պայքարող քաղաքացիները միանշանակ չեն վերաբերվում այս նախագծին: Սակայն անկախ նրանից, օրինագիծը կընդունվի, թե՛ ոչ, այն արդեն իսկ սկսել է «գործել»՝ հայ հասարակության ուշադրությունը բևեռելով պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումների վրա: Մենք գրուցել ենք խնդիրն ծանոթ և դրանով մտահոգ երիտասարդ կանանց ու տղամարդկանց հետ:

Ի՞նչ է «ԻՇՅԱ»-ի նշանակությունը

Արգելել մոտիկ սեռը հայտնելը. կողմ և դեմ

33 առողջապահության նախարարության մշակած օրինագիծը, որով պետք է արգելվի ծնողներին հայտնել ապագա երեխայի սեռը (մինչև 30 շաբաթական դառնալը), տարակարծություն է առաջացրել հասարակությունում: Նույնիսկ գենդերային անհավասարության դեմ պայքարող քաղաքացիները միանշանակ չեն վերաբերվում այս նախագծին: Սակայն անկախ նրանից, օրինագիծը կընդունվի, թե՛ ոչ, այն արդեն իսկ սկսել է «գործել»՝ հայ հասարակության ուշադրությունը բևեռելով պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումների վրա: Մենք գրուցել ենք խնդիրն ծանոթ և դրանով մտահոգ երիտասարդ կանանց ու տղամարդկանց հետ:

Սեռն այլ երիտասարդ մայր՝ ֆոտոլրագրող Անահիտ Հայրապետյանը, միանգամայն այլ կարծիքի է. «Օրենքի ընդունումով շատ բան չի փոխվի: Ես մորիցս լսել եմ շատ պատմություններ, որ էսինչ գյուղում էինք մարդը ճիշտ գուշակում է՝ երեխան ինչ սեռի է: Սեռը պարզելու մեթոդներ հաստատ կգտնեն, հաշվարկներ կանեն կամ այլ բաներ: Իսկ ընտանիքներում դրանից հարաբերությունները ավելի չեն լավանա, քանի որ կհնդ հեթոթական աղջիկն է լույս աշխարհ բերելու, ու անընդհատ երեսով են տալու, թե աղջիկներ են»:

Թավջութակահար Ալեքս Միրզայանը, ով անցյալ տարի սեռով պայմանավորված արթուրների վերաբերյալ կարճամետրաժ ֆիլմ էր համահեղինակել, մեզ հետ զրույցում նշեց, որ ինքը դժվարանում է միանշանակ կարծիք հայտնել օրինագծի վերաբերյալ. «Սեռն մտածում են՝ սխալ է, քանի որ մարդուն զրկում են իր ապագա երեխայի

Երեխայի սեռը հայտնելու արգելքը կարող է պարզապես փրկություն լինել ինձ նման կանանց համար, կարծում է 26-ամյա Ա.Կ.-ն: «Ամուսինս ու սկեսորս շատ են ուզում տղա երեխա, մեր ֆինանսական վիճակն էլ այնպիսին է, որ չենք կարող երկուսից ավելի երեխա ունենալ: Հիմա եթե երկրորդ հղիության ժամանակ պարզվի, որ էլի աղջիկ է, երկի ինձ կստիպեն, որ հեռացնեն: Բայց ես չեմ ուզում արթուր անել, դա մարդասպանություն է»,- ասում է Ա.Կ.-ն:

Թավջութակահար Ալեքս Միրզայանը, ով անցյալ տարի սեռով պայմանավորված արթուրների վերաբերյալ կարճամետրաժ ֆիլմ էր համահեղինակել, մեզ հետ զրույցում նշեց, որ ինքը դժվարանում է միանշանակ կարծիք հայտնել օրինագծի վերաբերյալ. «Սեռն մտածում են՝ սխալ է, քանի որ մարդուն զրկում են իր ապագա երեխայի

սեռն իմանալու իրավունքից, բայց մյուս կողմից էլ՝ այդպիսով կփրկվեն իզական սեռի երեխաները»:  
32-ամյա Արամ Մադաթյանն էլ կարծում է, որ օրենքն արդյունավետ չի գործի գուտ այն պատճառով, որ մեր հասարակությունը կոռուպցիոն է: «Ո՛ր բժշկի գրպանը 10 հազար դոլար, թե՛ քիչ ավել: Քանի դեռ մեր հասարակության գիտակցությունը չի բարձրացել, ոչ մի օրենքով էլ ես հարցը չի լուծվի»:  
Իսկ ապագա հայրիկ Սուրեն Բարսեղյանը կարևորում է նման օրենքի հոգեբանական ազդեցությունը: «...Երբ ծնողներին կզրկեն սեռն իմանալու իրավունքից, նրանք վերջապես կթափվեն ու կհասկանան, թե որքան դժան է քայլերի են գնացել իրենց կրթն իրենց հարևանը, ընկերը, և կարծում են, հասարակական կարծիքը կփոխվի, գուցե նաև վախենան արթուրի դիմելուց: Երբ նման խնդիրը կարգավորվում է օրենքով, քաղաքացին հասկանում է, որ պետական մոտեցում կա, ու որ իր երեխային վերացնելը ոչ միայն իր անձնական գործն է, այլև ազդեցություն է ունենում մեր հասարակության և պետության վրա»:

29-ամյա Սուրենը գիտի իր առաջնակի սեռը՝ աղջիկ են ունենալու. «Ես շատ ուրախ եմ, որ աղջիկ է, տղա էլ լինել, էլի կուրախանայի, երեխան երեխա է՝ անկախ սեռից»:

«...Այլ ճանապարհ չունենեմ»

Սեռի հասկանիչով պտղի նախածննդյան ընտրության դեմ պայքարելու մոր առաջարկի համաձայն՝ պետք է հղիության արհեստական ընդհատման թույլատրելի շեմը իջեցնել մինչև 10 շաբաթ, քանի որ ուլտրաձայնային հետազոտությանը հղիության այդ ժամկետում պտղի սեռը հնարավոր չէ որոշել: Հիջեցնենք, որ Հայաստանում գործող օրենքով մոր ցանկությանը հղիության ընդհատումը հնարավոր է մինչև հղիության 12-րդ շաբաթը: Բժշկական ցուցումներով արթուրը հնարավոր է մինչև 22-րդ շաբաթը: Այդ ժամկետից հետո արթուրն արգելված է:

Մեր այն հարցին, որ գուցե գերծամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում 10 շաբաթից ավելի վաղ իմանալու պտղի սեռը, մասնագետը պատասխանեց, որ հարցը ոչ թե տեխնոլոգիաներն են, այլ պտղի ձևավորումը՝ ապագա երեխայի սեռական օրգանները ձևավորվում են մինչև 12-13 շաբաթականը, և սեռը հստակ կարելի է որոշել միայն այդ ժամկետում: Աժ փոխխոսակ Հերմինե Նաղդայանը մոր առաջարկի վերաբերյալ ասաց, որ այն անշուշտ դեռ պետք է քննարկման լուրջ առարկա դառնա, բայց խնդիրն իսկապես խիստ մտահոգիչ է և ողջունելի է, որ առողջապահության նախարարությունը քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ:  
«Սեռն ավելի արթուրների խնդիրը իրականում կարծրատիպային է, և կարծում են այն, ինչ նախարարությունն այսօր առաջարկում է, ընդամենը մի փոքր քայլ է, բայց անշուշտ առաջնային քայլ»,- նշեց պատգամավորը՝ հիշեցնելով, որ մեկ ամիս առաջ էլ Ազգային ժողովում կին պատգամավորների և ՄԱԿ-ի բնակչության հիմնարամի ներկայացուցիչների մասնակցությամբ մեկ այլ առաջարկ էր քննարկվում, ինչը նշանակում է, որ կառավարության կողմից սեռը տեղեկատվությունների խնդիրը լուծելու կամք ու պատրաստակամություն կան:  
Հ.Նաղդայանը շատ կարևորեց այն հանգամանքը, որ շեմի նվազեցումը պետք է պաշտպանված լինի կոռուպցիոն ռիսկերից, որպեսզի բժշկի նկատմամբ մի փոքր վերադարձվող 12 շաբաթական ժամկետը 10-ով փոխարինելու առիթ չդառնա: «Պետք է մտածենք, թե ինչպես կարող ենք նման տարբերակների դեմ առնել, որպեսզի մեր պայքարն արդյունավետ լինի: Ես հսկանում եմ, որ ցանկացած արգելք հակազդման մեխանիզմներ է առաջ քաշում, բայց, կրկնում են, այլ ճանապարհ չունենք, պետք է գնանք դրան»,- հավելեց նա՝ կարևորելով նաև համապատասխան քարոզչության դեղ երիտասարդների շրջանում:

«Սա արհի» բժշկական կենտրոնի գինեկուրգ Անժելա Լեխյանը մեզ հետ զրույցում հաստատեց, որ շեմի իջեցումը 12 շաբաթականից մինչև 10 շաբաթական զրկում է պտղի սեռն իմանալու հնարավորությունից: «Եթե արթուր է արվում այդ ժամկետում, ապա կարելի է համոզված լինել, որ դա պայմանավորված չէ պտղի տղա կամ աղջիկ լինելով»,- նշեց տիկին Լեխյանը: Միաժամանակ նա կարծիք հայտնեց, որ եթե կինը ցանկանում է արթուր անել, ապա նրան հակառակը համոզելը շատ դժվար է, և եթե բժշկն այդ գործում կնոջը չօգնի, ապա հնարավոր է՝ կինը ինքն իրեն վնասի՝ ինքնուրույն, անգործազուրկ քայլեր կատարելով: Այնպես որ, բացառված չէ, որ նշված ժամկետից հետո, իմանալով պտղի սեռը, կինը, այնուամենայնիվ, գնա արթուրի, այս անգամ ոչ թե բժշկի հսկողությամբ, այլ ժողովրդական մեթոդներով կամ հեթմուճարի միջոցով:

ԾՅ 1/2Յ ճՅ ՍՄԻ - 2015

Հայաստանը պարտավորվել է

Պեկինյան գործողությունների ծրագրի 12 ուղղություններից մեկը և Հազարամյակի զարգացման ութ նպատակներից (ՀՁՆ) երկուսը վերաբերում են վերարտադրողական առողջության խնդիրներին:

ՀՁՆ 5. Մայրական առողջության բարելավում

Մինչև 2015 թվականը մայրական մահացության ցուցանիշը կրճատել 3/4-ով՝ 90-ական թվականների համեմատ (13 պրոմիլեից ցածր պետք է լինի):  
Մինչև 2015 թվականը ապահովել վերարտադրողական առողջապահության համատարած մատչելիություն:

ՀՁՆ 4. Երեխաների մահացության նվազեցում

Մինչև 2015 թվականը, 1990 թվականի համեմատ, 2/3-ով կրճատել երեխաների մահացության ցուցանիշը (մինչև 5 տարեկան՝ 10 պրոմիլեից ցածր, մինչև 1 տարեկանների՝ 8 պրոմիլեից ցածր):

Մայրությունը Հայաստանում

Հայաստանում մայրական մահացության ցուցանիշը (100 հազար կենդանի ծնունդի հաշվով) 19,2 է, ինչը ցածր է ԱՊՀ երկրների միջին ցուցանիշից (միջինը 29,3), բայց գալիորեն բարձր է, քան Եվրամիության երկրներում (միջինը 8):



Բացարձակ թվերով՝ մայրող 3 տարիների ընթացքում երկրում գրանցվել է ընդամենը 22 մայրական մահացության դեպք. 2011 թվականին եղել է 4, 2012-ին՝ 10, իսկ 2013-ին՝ 8 դեպք:

90-ականների համեմատ զգալիորեն նվազել է նաև մանկական մահացությունը, մայրող տարի այն եղել է 9,8 պրոմիլե (1000 կենդանի ծնունդի հաշվով): Այս ցուցանիշով ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը բարենպաստ դիրքերում է գտնվում, սակայն Եվրոպական երկրների համեմատ, որտեղ այդ ցուցանիշը 6,9 է, Հայաստանը դեռ անելիքներ ունի:

Բացարձակ թվերով՝ 2013-ին հանրապետությունում արձանագրվել է 0-4 տարեկան երեխաների մահվան 463 դեպք, որի կառուցվածքում մինչև 1 տարեկան երեխաների մահացության դեպքերը կազմել են 88,8%-ը:

ՀՀ առողջապահության նախարարության տվյալներով՝ Հայաստանում մինչև 5 տարեկան երեխաների մոտավորապես 20%-ը, այսինքն՝ յուրաքանչյուր հինգերորդը, քրոնիկական թերսնման խնդիր ունի, և դա ազդում է նրանց ֆիզիկական ու մտավոր զարգացման վրա: Որպես հետևանք՝ այդ երեխաների հասակը կարճ է, և քաշը նվազ է միջին ցուցանիշների համեմատ, նրանց մոտ կան սակավարյունության խնդիր:

Ծնունդների թիվը նվազում է

Վերջին 4 տարվա կտրվածքով ծնունդները Հայաստանում գնալով նվազում են: Ըստ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած վերջին տվյալների՝ 2013-ին Հայաստանում ծնունդների թիվը կազմել է 41.770, ինչը 2012-ի համեմատ 1,7%-ով քիչ է, երբ ծնվել էր 42.832 երեխա: Նշենք, որ 2011-ին հանրապետությունում ծնվել էր 43.297, իսկ 2010-ին՝ 44.737 երեխա:

Պողաբերության (ծնելիության գումարային գործակցի) ցուցանիշը, ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, մեկ կնոջ հաշվով կազմում է 1,6 երեխա, այն դեպքում, երբ բնակչության պարզ վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ է 2,1 երեխա:

Անպտղության սահմանային գծում

Հայաստանում բավականին բարձր է անպտղության գործակիցը, որը մոտ 17% է կազմում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ 15%-ից բարձր անպտղությունը ճգնաժամային ցուցանիշ է համարվում: Սա նշանակում է, որ մոտավորապես յուրաքանչյուր վեց զույգից մեկը չի կարողանում երեխա ունենալ: Ընդ որում, առաջնային անպտղությունը Հայաստանում 5% է, իսկ երկրորդայինը՝ 12%: Համեմատության համար՝ աշխարհում առաջնային անպտղությունը 1,9% է, երկրորդայինը՝ 10,5%:

Անպտղության հիմնական պատճառները Հայաստանում արթուրներն ու սեռավարակներն են: Մասնագետների գուշակումը՝ ամեն մի սեռավարակ, որը ժամանակին չի բուժվել կամ լիարժեք բուժում չի եղել, կարող է հետագայում բարդությունների հանգեցնել, այդ թվում և՛ անպտղության: Դրա հետ մեկտեղ այսօր Հայաստանում արհեստական սերմնավորման, փորձանոթային բեղմնավորման, արտամարմնական բեղմնավորման ճանապարհով տարեկան 3-4 հազար երեխա է ծնվում:



